



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Օգոստոսի 1-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում Լոնդոնի հայոց ա. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերքերյանը, քարոզում՝ Ժնկի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես Ծ. վրդ. Պոզապալյանը՝ «Արդ ո՞վ մեկնեցե՞ց զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞նն, թէ անձկութի՞նն, թէ հպածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞նն, թէ վի՞շտք, թէ սո՞ր, որպէս և գրեալ է, վասն ջո մեռանեմք զօր հանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանը» (Հոովմ. Ը 36) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Տ. Ներսես և տ. Արսեն վարդապետները հուլիսի 17-ին 10 օրով ուխտավորաբար ժամանել էին Մայր Աթոռ: Նրանք իրենց պաշտոնատեղին են վերադառնում օգոստոսի 7-ին:

*
*
*

Օգոստոսի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկ ամսով հանգրստանալու համար մեկնում է Կիարովոյակի «Կրասնի կամեն» ստուղարանը:

Վեհափառ Հայրապետին ողնկցում էր ա. Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Օգոստոսի 8-ին, կիրակի.—Բարեկենդան ա. Աստուածածնի պահոց.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

*
*
*

Օգոստոսի 15-ին, կիրակի.—Վերափոխումն ա. Աստուածածնի.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ա. պատարագի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, կատարվում է խաղողի օրհնության կարգը՝ խոուներամ ուխտավոր բազմության ներկայությամբ:

*
*
*

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում, քահանայական զգեստով, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Հավարտ ա. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէնն ննջեցելոց»:

*
*
*

Օգոստոսի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր

տանճարում և պատարագ է մատուցում տ. Նշան քին. Բելլերյանը:

*
*
*

Օգոստոսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր Կահիրեից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի և Հակոբյանց վանքի միաբան և Կահիրեի Գալստյան վարժարանի տնօրեն տ. Ներսես Ծ. վրդ. Փապունջյանը:

*
*
*

Օգոստոսի 26-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի մի խումբ սարկավազներ և ուսանողներ մեկօրյա պտույտի են մեկնում Արագածի լանջերը՝ տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քին. Մարությանի գլխավորությամբ:

*
*
*

Օգոստոսի 28-ին, շաբաթ.—Այսօր Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ է

ժամանում և Հակոբյանց վանքի միաբան տ. Աղան աբեղա Բալիոզյանը:

*
*
*

Օգոստոսի 29-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Կիլիկոպոլսից Մայր Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը՝ մեկամսյա հանգստից հետո՝ ընկերակցությամբ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանի: Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում է Մայր տանարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության:

*
*
*

Օգոստոսի 29-ին, կիրակի.—Գ կիրակի գկնի Վերափոխման. Տօն գիտի գոտուց Սրբունույ Աստուածածնի.

Մայր տանարում և պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը:

